ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

10.08.2020թ. *Քաղաքացիական գործ*
ք. Երևան *թիվ ՍնԴ/0019/02/20*

ՈՐՈՇՈՒՄ
Թիվ ՍնԴ/0019/02/20 քաղաքացիական գործի ենթակայությունը որոշելու մասին

1.Գործի դատավարական նախապատմությունը և ենթակայության հարցի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները.

Ա/Ձ Տիգրան Միրզոյանի սնանկության գործով կառավարիչ Վահագն Ավագյանը 04.02.2020թ. հայցադիմում է ներկայացրել ՀՀ սնանկության դատարան ընդդեմ Մխիթար Միրզոյանի, Գոհար Միրզոյանի, Նունե Միրզոյանի, Ժենյա Միրզոյանի՝ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող գույքից բաժինն առանձնացնելու, իսկ անհնարինության դեպքում՝ գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու, ստացված գումարը սեփականատերերի միջև՝ նրանց բաժիններին համաչափ բաշխելու պահանջի մասին:

ՀՀ սնանկության դատարանի (դատավոր՝ Լ. Կատվալյան) (այսուհետ նաև՝ Դատարան) 14.02.2020թ. որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ: Դատարանը, մասնավորապես, արձանագրել է. ««Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետով օրենսդիրն ամրագրել է այն քաղաքացիական գործերի շրջանակը, որոնք ենթակա են քննության սնանկության վարույթի շրջանակներում՝ հիմքում դնելով ներքոնշյալ երկու նախապայմանի միաժամանակյա առկայությունը.

1. քաղաքացիաիրավական վեճը պետք է առնչվի սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքին և իրավունքներին,

2. սնանկության գործով պարտապանը պետք է քաղաքացիական գործով հանդես գա որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն քաղաքացիական գործով պատասխանողը հանդիսանում է թիվ ԿԴ/0014/04/17 սնանկության գործով պարտապան, իսկ սույն քաղաքացիաիրավական վեճն առնչվում է թիվ ԿԴ/0014/04/17 սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքին և իրավունքներին, ուստի դատարանը գտնում է, որ քաղաքացիական գործը ենթակա է վարույթ ընդունելու»:

Այնուհետև, 21.05.2020 թվականին Դատարանը որոշում է կայացրել գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին՝ հետևյալ պատճառաբանությամբ.

««Սնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն ՀՀ օրենքի եզրափակիչ մասի և անցումային դրույթների 72-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում հարուցված՝ նույն օրենքի 3-րդ հոդվածին համապատասխանող գործերը նույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, փոխանցվում են դատարան:

««Սնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ, որի 3-րդ մասի համաձայն՝ սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով քաղաքացիական գործերը, բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի, քննում է սնանկության գործը վարող դատավորը նույն սնանկության գործի շրջանակում՝ որպես առանձին քաղաքացիական գործեր (այսուհետ՝ առանձին քաղաքացիական գործեր):

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված կանոնների խախտմամբ դատարանի կողմից վարույթ ընդունված գործերը դատարանն իր որոշմամբ հանձնում է Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ ընդհանուր իրավասության դատարան) քննությանը:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ սույն քաղաքացիաիրավական վեճի հայցվոր կողմ է հանդիսանում Ա/Ձ Տիգրան Միրզոյանի սնանկության գործով կառավարիչ Վահագն Ավագյանը:

... սնանկության վարույթի շրջանակներում քննության ենթակա՝ օրենսդրի ամրագրած որոշակի վեճերով ծագած քաղաքացիական գործերի շրջանակում չեն ներառվում այն հայցերը, որոնք ներկայացվել են սնանկության գործով կառավարչի կողմից:

Տվյալ դեպքում, դատարանի գնահատմամբ թիվ ՍնԴ/0019/02/20 քաղաքացիական գործը դատարանի վարույթ է ընդունվել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված կանոնների խախտմամբ, որպիսի պայմաններում դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործը պետք է հանձնել Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը»:

11.06.2020 թվականին թիվ ՍնԴ/0019/02/20 քաղաքացիական գործը մակագրվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Դ. Մխեյանին:

29.07.2020 թվականի որոշմամբ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը գործի ենթակայության շուրջ ծագած վեճը լուծելու նպատակով գործն ուղարկել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«(...) Դատարանն արձանագրում է, որ Սնանկության դատարանի կողմից գործն ըստ ենթակայության ուղարկելու որոշման իրավական հիմք են հանդիսացել «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի 3-րդ հոդվածով «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի նոր խմբագրությամբ 3-րդ և 5-րդ մասերը, ...:

Դատարանն արձանագրում է, որ Սնանկության դատարանի կողմից հայցադիմումը վարույթ է ընդունվել և գործը հարուցվել է մինչև վերոնշյալ փոփոխությունների ուժի մեջ մտնելը, …, հետևաբար նշված գործի նկատմամբ կիրառելի են «Սնանկության մասին» օրենքի՝ մինչև փոփոխությունները գործող խմբագրությամբ 4-րդ հոդվածի իրավակարգավորումները, որոնցում որևէ սահմանափակում՝ սնանկության կառավարչի կողմից ներկայացված հայցերը Սնանկության դատարանի կողմից քննելու առնչությամբ, առկա չէր…:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ Դատարանը գտնում է, որ թիվ ՍնԴ/0019/02/20 գործը ենթակա է քննության Սնանկության դատարանի կողմից»:

Թիվ ՍնԴ/0019/02/20 քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 03.08.2020թ.:

2. Կիրառելի իրավական նորմերը, պատճառաբանությունները և եզրահանգումը.

Սույն գործով առաջին ատյանի դատարանների միջև քաղաքացիական գործի ենթակայության շուրջ ծագած վեճը լուծելու համար գտնում եմ, որ անհրաժեշտ է անդրադառնալ և եզրահանգումներ անել հետևյալ իրավական հարցադրումների կապակցությամբ.

1) սնանկության վարույթին առնչվող քաղաքացիաիրավական վեճերի ենթակայության ինչպիսի՞ պայմաններ և առանձնահատկություններ են նախատեսված մինչև 15.04.2020 թվականը (մինչև 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքով և 15.04.2020թ. ուժի մեջ մտած՝ 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքով.

2) կարող են արդյո՞ք «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Ազգային ժողովի կողմից 12.12.2019թ. ընդունված թիվ ՀՕ-294-Ն օրենքի (ուժի մեջ է մտել 15.04.2020թ.) կարգավորումները կիրառվել մինչ այդ օրենքի ուժի մեջ մտնելը Սնանկության դատարանի վարույթում գտնվող սնանկության գործի կամ առանձին քաղաքացիական գործի հետագա վարման կամ առանձին դատավարական գործողությունների կատարման գործընթացում,

3) իրավասու է արդյո՞ք Սնանկության դատարանը գործն ըստ ենթակայության ուղարկել առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

Դիրքորոշումներ 1-ին հարցադրման վերաբերյալ.

Մինչև 15.04.2020 թվականը (մինչև 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ, քննվում են նույն սնանկության գործի շրջանակում:

Վկայակոչված իրավակարգավորումը «Սնանկության մասին» օրենքում ներդրվել է Ազգային ժողովի կողմից 17.06.2016թ. ընդունված և 23.07.2016թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-105-Ն օրենքով: Ընդ որում, նշված փոփոխությունը և լրացումը նախատեսող օրենքի նախագծի ընդունման հիմնավորումներում, որպես այդպիսի փոփոխության անհրաժեշտությունը հիմնավորող փաստարկ, նշված է. «Գործնականում հաճախ է հանդիպում, երբ պարտապանին վերաբերող վեճերը քննվում են տարբեր դատարաններում, օրինակ, երբ պարտապանը վիճարկում է գործարքների

անվավերությունը, գույքային պահանջներ է ներկայացնում և այլն: Նման դեպքերում սնանկության գործը մնում է առկախված: Պարտապանին վերաբերող բոլոր քաղաքացիական գործերը մեկ վարույթում քննելը կարող է այն ավելի արդյունավետ դարձնել»[1]: Շարադրվածից հետևում է, որ օրենսդրական այս փոփոխության նախաձեռնման և իրականացման նպատակը պարտապանին վերաբերող քաղաքացիական գործերը մեկ վարույթում կենտրոնացնելն է: Օրենսդիրը, մասնավորապես, նպատակ է հետապնդել ապահովել սնանկության գործընթացի արդյունավետությունը, այդ թվում՝ ապահովել սնանկության գործի վարման ամբողջականությունը, գործով բացահայտել հնարավոր բոլոր պարտատերերին և նրանց պահանջները, սնանկության վարույթով անցնող ցանկացած գույքի վերաբերյալ հարցի քննարկում կազմակերպել միայն սնանկության վարույթում, ինչը կապահովի սնանկության վարույթի արդյունավետությունը և սնանկության վարույթի մասնակիցների իրավունքների ամբողջական իրացումը, քաղաքացիական և սնանկության գործերի ողջամիտ ժամկետում քննությունը, բացառելով հանդերձ նույն գույքի կամ իրավունքի վերաբերյալ տարբեր դատարաններում քննվող գործերի, ինչպես նաև դատական ակտերի առկայությունը և այլն:

Մինչև 15.04.2020 թվականը (մինչև 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորման վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիաիրավական վեճը սնանկության վարույթում ենթակա է քննության միայն հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում

1) քաղաքացիական գործով վեճը պետք է ծագած լինի սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ,

2) սնանկության գործով պարտապանը պետք է հանդիսանա առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննվող քաղաքացիաիրավական վեճով պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ:

«Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Ազգային ժողովի կողմից ընդունված 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 15.04.2020թ.) «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ: Մասնավորապես, 15.04.2020թ. խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով քաղաքացիական գործերը, բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի, քննում է սնանկության գործը վարող դատավորը նույն սնանկության գործի շրջանակում՝ որպես առանձին քաղաքացիական գործեր (այսուհետ՝ առանձին քաղաքացիական գործեր):

Նշված նոր իրավակարգավորման բովանդակության բացահայտման արդյունքում կարելի է արձանագրել, որ օրենսդրի սահմանած նոր իրավակարգավորումն ենթադրում է քաղաքացիական գործերի առավել լայն շրջանակի քննություն սնանկության վարույթի շրջանակում, մասնավորապես՝ այն քաղաքացիական գործերը, որոնք կապված են սնանկ

[1] http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=8199&Reading=0

ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերի հետ (բացառությամբ սնանկության գործերով կառավարչների կողմից ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի):

Նոր իրավակարգավորումը, սակայն, նախատեսում է բացառություն այն դեպքերի համար, երբ քաղաքացիական գործը հարուցվել է սնանկության գործով կառավարչի հայցի հիման վրա: Նման հայցով հարուցվող քաղաքացիական գործի պարագայում այն սնանկության գործը վարող դատավորի կողմից նույն սնանկության գործի շրջանակում քննելու ենթակայության պայմանը չի գործում և այդպիսի գործը կարող է հարուցվել ենթակայության ընդհանուր կանոններին համապատասխան: Այլ կերպ ասած՝ սնանկության գործով կառավարչի կողմից հայցերը պետք է ներկայացվեն և քննվեն սնանկության վարույթի շրջանակից դուրս:

Այսպիսով, 15.04.2020թ. խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորումից հետևում է, որ քաղաքացիաիրավական վեճը սնանկության վարույթում ենթակա է քննության միայն հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

1) քաղաքացիական գործով վեճը պետք է ծագած լինի սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ, բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի,

2) քաղաքացիական գործով ծագած վեճը պետք է ազդեցություն ունենա Սնանկության դատարանում հարուցված և վարվող սնանկության գործով պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա:

Դիրքորոշումներ 2-րդ հարցադրման վերաբերյալ.

«Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Ազգային ժողովի կողմից 12.12.2019թ. ընդունված (ուժի մեջ է մտել 15.04.2020թ.) թիվ ՀՕ-294-Ն օրենքի՝ «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» սահմանող 72-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի ապրիլի 15-ից և տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հարուցված սնանկության գործերի վրա: Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը հարուցված սնանկության գործերը վարվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի նորմերով»:

«Սնանկության մասին» օրենքի՝ սնանկության գործերի քննության կարգը սահմանող 1-ին հոդվածի համաձայն՝

«1. Սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով և սույն օրենքով սահմանված կարգով:

2. Եթե սույն օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ապա սնանկության գործի քննությունն իրականացվում է սույն օրենքով սահմանված կանոններով»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ Օրենսգրքի գործողության ոլորտը սահմանող 1-ին հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝

«սույն օրենսգրքով սահմանված կանոնները կիրառելի են Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում (այսուհետ՝ սնանկության դատարան) սնանկության գործի վարման և դրա շրջանակում առանձին քաղաքացիական գործերի քննության նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Քաղաքացիական դատավարությունն իրականացվում է գործի քննության կամ առանձին դատավարական գործողության կատարման ժամանակ գործող օրենքով»:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Նորմատիվ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա, եթե այլ բան նախատեսված չէ Սահմանադրությամբ, օրենքով կամ տվյալ նորմատիվ իրավական ակտով»:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից»:

Վերոգրյալ իրավակարգավորումները վերլուծելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածի իրավակարգավորման լույսի ներքո՝ կարելի է հստակորեն արձանագրել, որ Ազգային ժողովի կողմից 12.12.2019թ. ընդունված թիվ ՀՕ-294-Ն օրենքով մեծածավալ փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Սնանկության մասին» օրենքում, և օրենքի «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» սահմանող հոդվածով տրվել են այն անհրաժեշտ իրավական լուծումները, որոնք հնարավորություն են տալիս տարանջատել մինչև օրենքի ընդունումը հարուցված և օրենքի ընդունումից հետո հարուցված սնանկության վարույթների նկատմամբ հետագա կիրառելի իրավակարգավորումների շրջանակը: Այսինքն՝ հստակ ընդգծվել է այն սահմանագիծը, թե սնանկության գործերի որ խմբի նկատմամբ են գործում 15.04.2020թ. ուժի մեջ մտած՝ 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի կարգավորումները (այդ թվում՝ 4-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով), և սնանկության գործերի որ խմբի նկատմամբ են շարունակում գործել մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի կարգավորումները (այդ թվում՝ 4-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով):

Միաժամանակ հարկ է նշել, որ ի թիվս 15.04.2020թ. ուժի մեջ մտած՝ 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի մյուս կարգավորումների, նույն օրենքի՝ «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» սահմանող 72-րդ հոդվածի 10-րդ մասը կիրառելիս պետք է այն դիտարկել համակարգային, այն է՝ նույն հոդվածի 1-ին մասի իրավակարգավորման լույսի ներքո և շրջանակներում:

Մինչև 15.04.2020 թվականը հարուցված սնանկության գործերի վարման գործընթացում 15.04.2020թ. ուժի մեջ մտած՝ 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքով սահմանված իրավակարգավորումները կիրառելը, այդ թվում՝ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառման իմաստով, ուղղակի կիակասի նույն օրենքի՝ «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» սահմանող 72-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորմանը:

Ինչ վերաբերում է սնանկության կառավարիչների կողմից ներկայացվող հայցերի հիման վրա հարուցված գործերի ենթակայությանը, ապա ինչպես արդեն իսկ նշվեց, 15.04.2020թ. ուժի մեջ մտած իրավակարգավորումը նման հայցով հարուցվող քաղաքացիական գործի պարագայում այն սնանկության գործը վարող դատավորի կողմից նույն սնանկության գործի շրջանակում քննելու ենթակայության պայմանը չի գործում և այդպիսի գործը կարող է հարուցվել ենթակայության և ընդդատության ընդհանուր կանոններին համապատասխան: Ընդ որում, 15.04.2020թ. ուժի մեջ մտած՝ 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» սահմանող 72-րդ հոդվածը որևէ հատուկ կարգավորում չի նախատեսել սնանկության կառավարիչների կողմից մինչև նշված օրենքի ուժի մեջ մտնելն արդեն իսկ հարուցած հայցերով գործերի ենթակայության կամ դրանք ընդհանուր իրավասության դատարաններին հանձնելու վերաբերյալ: Հետևաբար, հաշվի առնելով 15.04.2020թ. ուժի մեջ մտած՝ 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» սահմանող 72-րդ հոդվածի 1-ին մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումը և նկատի ունենալով, որ սնանկության կառավարիչների հայցերի հիման վրա հարուցվող գործերի ենթակայության հատուկ պայմանը սահմանվել է 15.04.2020թ. ուժի մեջ մտած՝ 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքով, հարկ է արձանագրել, որ նշված կանոնը գործում է 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո սնանկության կառավարիչների կողմից հարուցվող հայցերի նկատմամբ՝ միաժամանակ այն պայմանով, որ սնանկության գործը, որին առնչվող որևէ իրավական վեճով հայց է ներկայացնում սնանկության կառավարիչը, ևս վերոգրյալ իրավական դիրքորոշումների հիմքով պետք է հարուցված լինի 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո:

Դիրքորոշումներ 3-րդ հարցադրման վերաբերյալ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝

1. Դատարանը տարածքային ընդդատության կանոնների պահպանմամբ իր վարույթ ընդունած գործը պետք է քննի ըստ էության, թեկուզև այն հետագայում դարձել է ընդդատյա այլ դատարանի:

2. Դատարանը գործը հանձնում է այլ դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն վարույթ է ընդունվել սույն օրենսգրքի 24-րդ կամ 138-րդ հոդվածով սահմանված կանոնների խախտմամբ:

3. Դատարանը գործը հանձնում է սնանկության դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն ենթակա է քննության սնանկության դատարանում:

4. Սույն օրենսգրքի 21-րդ կամ 22-րդ հոդվածով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործը հանձնվում է այլ դատարանի քննությանը, եթե պատասխանողը մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելն առարկում է գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ:

5. Գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին կայացվում է որոշում:

15.04.2020թ. խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված կանոնների խախտմամբ դատարանի կողմից վարույթ ընդունված գործերը դատարանն իր որոշմամբ հանձնում է Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ ընդհանուր իրավասության դատարան) քննությանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վկայակոչված կարգավորումների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն ընդհանուր իրավասության դատարանին իր վարույթում գտնվող գործն այլ դատարանի քննության հանձնելու իրավական հնարավորություն վերապահել է հետևյալ երկու դեպքերում՝

ա) եթե բացահայտվել է, որ գործը վարույթ է ընդունվել տարածքային ընդդատության կանոնի խախտմամբ.

բ) եթե բացահայտվել է, որ գործը ենթակա է քննության սնանկության դատարանում:

Ընդ որում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը որևէ կարգավորում չի նախատեսում Սնանկության դատարանի՝ իր վարույթում գտնվող գործն ընդհանուր իրավասության դատարանի փոխանցելու իրավական հնարավորության վերաբերյալ:

Նման կարգավորում չէր նախատեսում նաև մինչև 15.04.2020թ. գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքը, և միայն 12.12.2019թ. ընդունված (ուժի մեջ է մտել 15.04.2020թ.) թիվ ՀՕ-294-Ն օրենքով օրենսդիրն իրավունք է վերապահում Սնանկության դատարանին «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործը որոշմամբ հանձնել Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ ընդհանուր իրավասության դատարան) քննությանը: Այսինքն՝ Սնանկության դատարանը 12.12.2019թ. ընդունված թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելուց՝ 15.04.2020 թվականից հետո, իրավասու է գործն հանձնել ընդհանուր իրավասության դատարանին: Այդուհանդերձ, այդ իրավասության իրականացման համար օրենսդիրը սահմանել է որոշակի նախապայման, այն է՝ գործը պետք է հարուցված լինի «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված կանոնների խախտմամբ: Հետևաբար, հաշվի առնելով, որ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածը փոփոխվել ու լրացվել է 12.12.2019թ. ընդունված թիվ ՀՕ-294-Ն օրենքով, որն ուժի մեջ է մտել 15.04.2020թ., ապա գործնականում քննարկվող իրավիճակը հնարավոր է միայն 15.04.2020 թվականից հետո Սնանկության դատարան ներկայացված և ենթակայության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործերի պարագայում՝ սույն որոշման «Դիրքորոշումներ 2-րդ հարցադրման վերաբերյալ» կետում շարադրված ամփոփիչ դիրքորոշումների հաշվառմամբ:

Սույն քաղաքացիական գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Դատարանի **14.02.2020թ.** որոշմամբ վարույթ է ընդունվել **Ա/Ձ Տիգրան Միրզոյանի սնանկության գործով կառավարիչ Վահագն Ավագյանի** հայցադիմումն ընդդեմ Մխիթար Միրզոյանի, Գոհար Միրզոյանի, Նունե Միրզոյանի, Ժենյա Միրզոյանի՝ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող գույքից բաժինն առանձնացնելու, իսկ անհնարինության դեպքում՝ գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու, ստացված գումարը սեփականատերերի միջև՝ նրանց բաժիններին համաչափ բաշխելու պահանջի մասին: Դատարանը նշված որոշմամբ, վկայակոչելով մինչև 15.04.2020թ. գործող խմբագրությամբ «Սնանկության մասին»

օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասը, արձանագրել է, որ «սույն քաղաքացիական գործով **պատասխանողը** հանդիսանում է **թիվ ԿԴ/0014/04/17 սնանկության գործով պարտապան,** իսկ սույն քաղաքացիաիրավական վեճն առնչվում է թիվ ԿԴ/0014/04/17 սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքին և իրավունքներին»: Ուստի Դատարանը գտել է, որ քաղաքացիական գործը ենթակա է վարույթ ընդունման:

Դատարանը, փաստորեն, սույն գործով հայցադիմումը վարույթ ընդունելիս իր որոշմամբ արձանագրել է, որ **թիվ ԿԴ/0014/04/17 սնանկության գործով պարտապան Ա/Ձ Տիգրան Միրզոյանը** սույն գործով հանդիսանում է պատասխանող:

21.05.2020 թվականին Դատարանը որոշում է կայացրել գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին: Դատարանը, վկայակոչելով և կիրառելով 15.04.2020թ.-ից գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերը, պատճառաբանել է, որ սույն քաղաքացիաիրավական վեճի հայցվոր կողմ է հանդիսանում Ա/Ձ Տիգրան Միրզոյանի սնանկության գործով կառավարիչ Վահագն Ավագյանը, հետևաբար թիվ ՍնԴ/0019/02/20 քաղաքացիական գործը դատարանի վարույթ է ընդունվել [15.04.2020թ.-ից գործող խմբագրությամբ] «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված կանոնների խախտմամբ, որպիսի պայմաններում այն պետք է հանձնել Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը թիվ ՍնԴ/0019/02/20 քաղաքացիական գործի ենթակայության վերաբերյալ իր անհամաձայնությունը հիմնավորել է՝ նշելով, որ Սնանկության դատարանի կողմից սույն գործով հայցադիմումը վարույթ է ընդունվել և գործը հարուցվել է մինչև 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը (15.04.2020թ.), հետևաբար նշված գործի նկատմամբ կիրառելի են «Սնանկության մասին» օրենքի՝ մինչև փոփոխությունները գործող խմբագրությամբ 4-րդ հոդվածի իրավակարգավորումները, որոնցում որևէ սահմանափակում՝ սնանկության կառավարչի կողմից ներկայացված հայցերը Սնանկության դատարանի կողմից քննելու առնչությամբ, նախատեսված չէ:

Հարկ է արձանագրել, որ www.datalex.am դատական տեղեկատվական համակարգի տվյալների համաձայն՝ թիվ ԿԴ/0014/04/17 գործով պարտապան Ա/Ձ Տիգրան Միրզոյանի սնանկ ճանաչելու վերաբերյալ դիմումը դատարան է ներկայացվել 15.08.2017թ. և դատարանի որոշմամբ վարույթ է ընդունվել 16.08.2017թ.:

Միաժամանակ սույն գործով հայցադիմումը Դատարան է ներկայացվել 04.02.2020թ. և վարույթ է ընդունվել 14.02.2020թ.: Այսինքն՝ սույն գործը հարուցվել է մինչև 12.12.2019թ. ընդունված թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը (15.04.2020թ.), հետևաբար սույն գործով քաղաքացիաիրավական վեճի ենթակայության հարցը պետք է լուծել մինչև 15.04.2020թ. գործող «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորման լույսի ներքո: Մասնավորապես, Դատարանը, նշված իրավանորմի կիրառմամբ, Ա/Ձ Տիգրան Միրզոյանի սնանկության գործով կառավարիչ Վահագն Ավագյանի հայցադիմումը վարույթ ընդունելիս, արձանագրել է, որ հայցադիմումը վարույթ ընդունելու պահին առկա են եղել վկայակոչված իրավանորմով սահմանված պայմանները: Դատարանը հետագայում գործն այլ դատարանի քննությանը հանձնելիս որևէ եզրահանգում չի կատարել նշված պայմանների կապակցությամբ, որևէ կերպ չի փաստարկել այդ պայմանների խախտմամբ հայցադիմումը վարույթ ընդունված լինելու հանգամանքը կամ դրանց՝ գործի քննության ընթացքում փոփոխության

հանգամանքը, այլ վկայակոչելով 15.04.2020թ.-ից գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերը, կարևորելով հայցը սնանկության կառավարչի կողմից ներկայացված լինելու հանգամանքը, եզրահանգել է, որ գործը ենթակա է ընդհանուր իրավասության դատարանին:

Մինչդեռ, ինչպես արդեն իսկ շարադրվել է սույն որոշման «Դիրքորոշումներ 3-րդ հարցադրման վերաբերյալ» կետում, 15.04.2020թ.-ից գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսված՝ սնանկության կառավարիչների կողմից ներկայացվող հայցերի կապակցությամբ սահմանված ենթակայության պայմանը կիրառելի է միայն նման կարգավորումը նախատեսող 12.12.2019թ. ընդունված թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո հարուցված հայցերի նկատմամբ և այդ պայմանի խախտմամբ գործը կարող է հանձնվել ընդհանուր իրավասության դատարանին, եթե հայցը հարուցվել է և Սնանկության դատարանի կողմից վարույթ է ընդունվել 12.12.2019թ. ընդունված թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ նույն օրենքով սահմանված ենթակայության պայմանի խախտմամբ՝ միաժամանակ այն պայմանով, որ սնանկության գործը, որին առնչվող իրավական վեճով է հայց ներկայացրել սնանկության կառավարիչը, ևս վերոգրյալ իրավական դիրքորոշումների հիմքով պետք է հարուցված լինի 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո:

Այնինչ՝ տվյալ պարագայում Ա/Ձ Տիգրան Միրզոյանին սնանկ ճանաչելու վերաբերյալ դիմումը դատարան է ներկայացվել 15.08.2017թ. և դատարանի որոշմամբ վարույթ է ընդունվել 16.08.2017թ., սույն գործով հայցը հարուցվել է 04.02.2020թ. և վարույթ է ընդունվել 14.02.2020թ.: Այսինքն՝ թե՛ Ա/Ձ Տիգրան Միրզոյանի սնանկության վերաբերյալ գործը, թե Ա/Ձ Տիգրան Միրզոյանի սնանկության կառավարչի հայցադիմումի հիման վրա սույն գործը հարուցվել են մինչև 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը, հետևաբար 15.04.2020թ. ուժի մեջ մտած՝ 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքով նախատեսված ենթակայության վերաբերյալ կարգավորումները կիրառելի չեն նշված վարույթների նկատմամբ, մասնավորապես՝ սույն գործով հայցադիմումը չէր կարող վարույթ ընդունված համարվել 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքով սահմանված ենթակայության պայմանի խախտմամբ և այդ հիմքով հանձնվել ընդհանուր իրավասության դատարանին, ինչը, սակայն, անտեսվել է Դատարանի կողմից:

Միաժամանակ, նկատի ունենալով, որ Դատարանը սույն գործն ընդհանուր իրավասության դատարանին հանձնելու իր որոշումը բացառապես հիմնավորել է հայցը սնանկության կառավարչի կողմից հարուցված լինելու հանգամանքով, որպիսի հանգամանքը որևէ նշանակություն ունենալ չի կարող սույն գործի ենթակայության հարցը լուծելիս, վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները թույլ են տալիս եզրակացնել, որ թիվ ՍնԴ/0019/02/20 քաղաքացիական գործը Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանին ըստ ենթակայության հանձնելու համար գործում բացակայում են անհրաժեշտ փաստական և իրավական ամբողջական հիմքերը, ուստի թիվ ՍնԴ/0019/02/20 քաղաքացիական գործը պետք է հանձնել Սնանկության դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները, և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ ՍնԴ/0019/02/20 քաղաքացիական գործը ենթակա է Սնանկության դատարանին:

2. Սույն որոշումը և թիվ ՍնԴ/0019/02/20 քաղաքացիական գործի նյութերն ուղարկել Սնանկության դատարան:

3. Որոշման օրինակն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

ԵՐՎԱՆԴ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ